

ւում է մեր այս կամ այն միջավայրը իր լաւ և վատ կողմերով բեմ հանել և բաց անել մեր կեանքը կրծող վէրքերից մէկն ու մէկը, «Պատուի համարը» մեր հասարակական մարմանի վրայ մի այդպիսի շարաւալից վէրքի պատկերն է:

Խաղը լաւ անցաւ իր ամբողջութեամբ: Հեղինակը բուռն ծափահարութիւնների առարկայ դարձաւ.

Ա.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ- ՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Խնչպէս յայտնի է բամբակագործութեամբ Ռուսաստանում զրադում են Անդրկովկասում, Թուրքաստանում և Անդրկասպեան երկրներում: Այդ երկրների մէջ առաջին տեղն է բռնում Թուրքաստանը, որ տալիս է տարեկան 5—5½ միլիօն պուդ բամբակ, յետոյ գալիս է Անդրկովկասը (մօտ 700 հազար պուդ), իսկ Անդրկասպեան երկիրը բռնում է վերջի տեղը, մօտ 300—400 հազար պուդ արդինաբերութեամբ:

Թէ ինչ արագութեամբ է զարգանում բամբակագործութիւնը Ռուսաստանում, երկում է այն փաստից, որ դեռ մի 14—15 տարի առաջ Ռուսաստանի ամբողջ արդինաբերութիւնը չէր հասնում 2 միլիօն պուդի, իսկ այժմ նա աւելի քան եռապատկուել է: Պէտք է առհասարակ նկատել, որ բամբակի կուլտուրան XIX դարու երկրորդ կիսում արել է հսկայական առաջադիմութիւն:

Մինչդեռ մի դար առաջ, 1801 թուին, ամբողջ երկրագնդի վրայ ստացուել է 14 միլիօն պուդ բամբակ, այժմ միայն Ամերիկան տալիս է 10—11 անգամ աւելի շատ, այսինքն մօտ 150 միլիօն պուդ:

Երկրորդ տեղն է բռնում Հնդկաստանը 35 միլ. պուդ. յետոյ գալիս է Չինաստանը 20 միլ. պուդ, Եգիպտոսը 15 միլ. պուդ և Ռուսաստանը 6—7 միլ. պուդ:

Այս վերջին քանակութիւնը չի կարողանում բաւականութիւն տալ ուսւագութեամբ գործարանատէրերին, այնպէս որ նրանք ստիպուած են տարեկան մօտ 10 միլ. պուդ էլ առնել ուրիշ երկրներից, վճարելով դրա համար մօտ 90—100 միլ. ըուբրի:

Այսպիսի մեծ քանակութեամբ օտար բամբակի պահանջ

ունենալով, և ցանկալով այս կարիքը հոգալ իր ոյժերով, ռուս կառավարութիւնը ամեն կերպով աշխատում է նպաստել գիւղատնտեսութեան այդ կարևոր ճիւղի զարգացման Ռուսաստանում: Այդ նպատակով նա մտցրել է հովանաւորական մաքսօտար բամբակի վրայ (պաւլին մօտ Յ ըուրլի), հիմնում է զանազան ագարակներ, պահում է մասնագէտ—ինստրուկտորներ, հրաւիրում է համաժողովներ, որտեղ քննուում են բամբակագործութեան կարիքները և նոյնի զարգացման նպաստող միջոցները եայլն:

Հէնց այդպէս համաժողովներ էր հրաւիրուել այս հոկտեմբեր ամսին Աղդաշում և Երևանում: Համաժողովները ընդամենը տևեցին ամեն մէկը 2 օր. Աղդաշում հոկտեմբերի 5-ից—7-ը, իսկ Երևանում 14—16-ը: Խոչպէս յայտնի է Երևանի նահանգը իր բամբակագործութեամբ Անդրկովկասի նահանգների մէջ ընուամ է առաջին տեղը, տալով մօտ 500 հազար պուդ, այսինքն Անդրկովկասի բոլոր արդիւնաբերութեան՝ 4/5-ական մասը. երկրորդ տեղը պէտք է գնել Գանձակի նահանգը, իր բամբակի գլխաւոր շուկայ Աղդաշում, 100 հազար պ., յետոյ արդէն գալիս են Բագուայ նահանգը 50—60 հազ. պ., Քութայիսի՝ 30 հազ. պ. և Վերջապէս Թիֆլիսի՝ 10 հազ պուդ: Այդ համաժողովներին բացի կառավարութեան կողմից նշանակուած մարդկանց, մասնակցում էին և տեղական կարուածատէրներից մի քանիսը: Իսկ գիւղացիք, որոնք իսկապէս բամբակի գլխաւոր, եթէ ոչ միակ արդիւնաբերողներն են, չունէին ոչ մէկ ներկայացուցիչ: Մանրամասն ըննելով բամբակագործութեան կարիքները, համաժողովները եկան ի միջի այլոց *), հետևեալ եղրակացութիւններն:

Բամբակագործութեան զարգացման խանգարող պայմանների մէջ, համաժողովների կարծիքով, առաջին տեղն է բռնում բանտորների պակասութիւնը, որը նամանաւանդ շատ զգալի է Գանձակի, Բագուայի, Քութայիսի և Թիֆլիսի նահանգների համար:

Բամբակագործութիւնը, լինելով գիւղատնտեսութեան ինտենսիւ ճիւղերից մէկը, պահանջում է շատ մեծ չափերով բանտորական ձեռքեր, մանաւանդ բամբակի մշակութեան ձեռքում: Մեզ մօտ բամբակագործութեան մէջ անհրաժեշտ բոլոր աշխատանքները մարդիկ կատարում են իրանց ձեռքերով:

*.) Խօսել յանձնաժողովների ընդունած բոլոր որոշումների մասին՝ մեզ հեռու կը տանէր. դա այնքան էլ հետաքրքիր չէ, այնպէս որ մենք կանգ կտանենք միայն գիւղաւորների վրայ:

Մինչդեռ Ամերիկայում, օրինակ, այն բոլոր աշխատանքները, որոնք կարելի է կատարել մեքենաների միջոցով այդպէս էլ անուում են:

Այստեղ այժմ արդէն ոչ ոք համարեա ձեռքով չի ցանում և քաղանում, այլ այդ աշխատութիւնների համար գործ են ածում մեքենաներ, որոնք թէ աւելի շուտ և թէ աւելի լաւ են կատարում այդ զործողութիւնները, քան մարդը։ Այդպիսով ամերիկացին կարողացել է թէ հեշտացնել իր գործը և թէ հարկաւոր բանուրների թիւը կրճատել մի քանի անգամ։ Նոյն միջոցին պէտք է դիմեն և մեր բամբակագործները։

Դրա համար անհրաժեշտ է Անդրկովկասի զանազան մասերում հիմնել գիւղատնտեսական գործիքների պահեստներ, որտեղից գիւղացիք կարողանացին թեթև պայմաններով ձեռք բերել սնհրաժեշտ գործիքներ և երկրորդ՝ բամբակագործներին շանագուն դուքանչինների և վաշխառուների ճանկերից ազատելու համար, բանալ փոխատու հիմնարկութիւններ։ Իսկ բանուրների թիւը շատացնելու համար յանձնաժողովները ցանկութիւն յայտնեցին որ՝ ա) գիւղութիւն տրուի Պարսկաստանից բանուրներ գալուն՝ բ) ամեն կերպով նպաստել գաղթականութեան Ռուսաստանից Անդրկովկաս և գ). հարաւոր չափերով թուլացնել թափառականութիւնը թուրք ազգաբնակութեան մէջ։

Բամբակագործութեան զարգացման խանգարող երկրորդ գործօնն է, համաժողովների կարծիքով, ոռոգուող հողերի սակաւութիւնը։ Այդ պատճառով, համաժողովների կարծիքով մի կողմից պէտք է ոռոգել նոր-նոր հողեր, միւս կողմից պակասեցնելով բրնձի ցանքսերի քանակութիւնը, որը 4—5 անգամ աւելի շատ ջուր է պահանջում, քան բամբակը։

Մի կողմ թողնելով այն, որ այսպիսի փոփոխութիւնները կատարելու համար բաւական չեն միայն ցանկութիւններ, այլ հարկաւոր են աւելի լուրջ հանգամանքներ, պէտք է նկատել, որ այն ցանքսերն էլ որ անուում են, բանուրների պակասութեան շնորհիւ, կատարում են ամենաանուշագիր կերպով, և դրա համար էլ չեն տալիս նոյնիսկ կէսը այն բերքի, որը կարելի կը լիներ ստանալ մի քիչ աւելի ուշադիր և լաւ մշակութեան դէպքում։ Երկրորդ՝ դեռ Անդրկովկասում շատ ոռոգած ու պարապ հողեր կան, որոնք կարող կը լինէին ծառայել այդ նպատակին։ Եւ երրորդ, ջրի նոյն քանակութեամբ, միայն մի քիչ աւելի կանոնաւորելով ջրաբաշխութեան գործը և լաւացնելով մշակութեան ձեր, կարելի կը լինէր զգալի

կերպով աւելացնել բամբակի ցանքսերը տռանց նոր ծախսեր անելու նոր հողեր ոռոգելու համար:

Բանը նրանումնէ, որ մի քանի տարի առաջ լոյս են տեսել Անդրկովկասի համար Ջրաբաշխութեան առանձին կանոններ: Բայց որովհետև այդ կանոնները, ինչպէս և շատ-շատերը, կազմուել են երկրի պայմանների: Կետ անծանօթ անձանց ձեռքով, այդ կանոններից շատերը անհամապատասխան և անիրազործնի են: Համաժողովները ցանկութիւն յայտնեցին, որ այդ կանոնները՝ երկրին և գործին տեղեակ մարդկանց ձեռքով բնութեան և փոփոխութեան ենթարկուեն:

Բայցի այս բոլորից, համաժողովները շատ ուրիշ ըլաւ ցանկութիւններ» էլ յայտնեցին: Օրինակ, որ Անդրկովկասում աւելացնուի մասնագէտների և ինստրուկտորների թիւը, հիմունի ստորին դպրոցներ, հմուտ բանտորներ պատրաստելու համար, աւելացնուի մետէօրոլոգիական կայարանների թիւը, կազմակերպուի Անդրկովկասի համար գիւղատնտեսական վիճակագրական կոմիտետ, կանոնաւորուի բամբակի առևտուրի գործը, բամբակագործներին լաւ սերմ մատակարարուի ևայլն: Բայց նվազագույնը է իրագործի այս բոլորը:

Երկու համաժողովներն էլ միաձայն եկան այն եղրակացութեան, որ այս բոլորը իրագործելու համար Անդրկովկասում պէտք է մտցնուեն զեմստվօններ:

Եւ իսկապէս, մինչև որ Անդրկովկասին չտրուեն զեմստվօններ, մինչև որ ազգաբնակութիւնը ինքը չկարողանայ մտածել և հոգալ իր կարիքները ու ցաւերը, մինչև որ նրա բոլոր բարելաւութիւնները կախուած կը լինեն «բարի» և միննոյն ժամանակ «կուշտ» մարդկանց խորհուրդներից և տէրութեան կողմից նշանակուած «չինովնիկներից», մինչև այդ ժամանակ այս և այս տեսակ շատ ուրիշ «բարի» ցանկութիւններ» կը մնան լոկ «ցանկութիւններ»:

Այս բոլոր «բարի» ցանկութիւններին» կարելի է աւելացնել ևս մէկը՝ որը մեր կարծիքով շատ կարևոր է, և որը, դժբախտաբար, ոչ մի ուշադրութեան չէ արժանացել այդ համաժողովներից և ոչ մէկում: Մեր խօսքը «Միւլքաղարական իշրաւունքի» մասին է, որը մեծ խոչընդուն է ներկայանանում ոչ միայն բամբակագործութեան այլ և մանր գիւղատնտեսութեան բոլոր ուրիշ ճիշերի զարգացման համար:

Միւլքաղարական են կոչւում այն հողերը, որոնք լինելով առանձին անհատների սեփականութիւն, գտնուում են գիւղացիների ձեռքում, և վերջիններս այդ հողերով օգտուելու հա-

մար պարտաւոր են հողատիրոջ տալ ստացած բերքի մի յայտնի մասը (առհասարակ 30 մասից 4-ը):

Գիւղացին իրաւունք չունի իր բերքը հաւաքել, մինչև որ հողատէրը կամ նրա ուղարկած մարդը «չբարեհաճեն» գալ և ստանալ իրանց մասը: Հասկանալի է, թէ ինչ մեծ անյարմարութիւն է ներկայացնում այս բանը գիւղացու համար:

Օրինակ նա ցորենը կամ գարին պէտք է պահի խուրձերում և իրաւունք չունի նրանց ժամանակին կալսել և հաւաքել, մինչև որ հողատէրը չստանայ իր «բահրան»: Յաճախ ցորենը և գարին հէնց խուրձերում էլ փտում կամ մկներն են ուտում մինչև աղայի գալը: Դալով բամբակագործութեան համար ներկայացրած անյարմարութիւններին՝ պէտք է նկատել հետևեալը: Ինչպէս յայտնի է, բամբակը միանգամից չի բացւում, այլ նա սկսում է բացուել մաս-մաս և անհրաժեշտ է նըրան այդպէս էլ հաւաքել:

Բամբակի մաս-մաս հաւաքելը թէ յարմար է գիւղացու համար, որովհետեւ նա իր ընտանիքի ոյժերով աննկատելի կերպով կարող է կատարել այդ և թէ բերքը չի ենթարկում փշանայու վտանգին: Խոկ միւլքաղարական հողերում, հողատէրը յաճախ շատ հեռու է ապրում, և իր յարմարութեան համար, պահանջում է որ բերքը միանգամից հաւաքուի: Հասկանալի է որ այդ դէպքում գիւղացին շատ դժուարանում է բատականանալ իր ընտանիքի ոյժերով, և ստիպուած է լինում կամ բանտորներ վարձել, որ աւելի յաճախ է լինում, զգալի կերպով կրնատել իր ցանքսերի տարածութիւնը: Միւլքաղարական իրաւունքը մնացել է ճորտութեան ժամանակից և այժմ ժամանակ: Է նրան կամ բոլորովին ոչնչացնել կամ փոխարինել մի որկեցէ ուրիշ բանով:

Թէ որքան շատ են այդպիսի հողերի թիւը Անդրկովկասում, մանաւանդ Երևանի նահանգում, ցոյց են տալիս հետևեալ թուերը: Միայն Երևանի նահանգում այս տեսակ հողերի թիւը հասնում է 76 հազար գեսեատինի, որի վրայ գտնուած են 18 հազարից աւելի տնտեսութիւններ: Եթէ այս ժմիւլքաղարական հողերին աւելացնենք և այն ճնադելնից հողերը, որոնք նոյնպէս տալիս են բերքի մի մասը, մենք կը ստանանք այդ տեսակ տնտեսութիւնների բաւական խոշոր թիւ:

Եր. Սարգսեան